36. ՍԸՏԱՆԻՆ ՀՈՒ ԿՆԳԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Իղա̈լ ա̈ չիլա̈լ մին կնեգյ, մին էլ մին սըտանա։ Էս սըտանան էս կնդանս ասալ ա թա. «Ես կինեմ ղոչա՞ղ, թա տո̈ւ»։ Էս կնեգյն ասալ ա. «Ես»։ Սըտանան էլ ասալ ա թա. «Ես»։ Էս կնեգյս ասալ ա թա. «Վըեր տըհենց ա, աման վախտ տու էլ ինսանի շորեր կյեց, ես էլ, տուս կյանք բազար, տըեսնանք հո՞ւ շատ ա̈րո̈ւն կանե»։ Թա. «Ընդե հա»։

Ինսանի շորեր ըն կյեցալ, սըտանան բազարին էն կլխավն ա նի մտալ, կնեգյը էն մին կլխավը։ Էս կնեգյս քյինացալ ա մին ներկարարի դո̈ւքյան, ներկարարին ասալ. «Թիլ օնեմ, քյինալու վըմ պիրեմ, հունցը վըեր ներկես, տըեսնամ ներկտ լա̈վ ա՞»։ Ծերքը կարասին մեջն ա կոխալ, ներկոտ ըրալ, քյինացալ էն ներկարարին տոնը, կնգանն ասալ, թա. «Ծեծտ պա̈ց, տեսնամ հո՞ւնց ա»։ Նա ծեծը պա̈ցա̈լ ա, բիրտան ծերքը սրտին ա ճխտալ, քյինացալ ա ներկարարին ասալ, թա. «Կնեկյտ ըրիշ ներկարարի նհետ ա ինգյա̈լ»։ Էս ներկարարը ասալ ա. «Պա հինչ ը՞ս գյո̈ւտո̈ւմ»։ Թա. «Դե քյինա տես, հեն ա վըեր ծըերքը տրա̈լ ա սըտին, մա̈հլո̈ւմ ա»։

Էս ներկարարը եր ա կացալ, քյինացալ ո̈ւրա̈ն կնգանը ըսպանալ։ Էս կնգանը հա̈րա̈նց տոնն էլ մոտիկ ա իլա̈լ. էս կնգանն ախպերն էլ եկալ ա ներկարարին ըսպանալ։ Ներկարարին ախպերն էլ եկալ ա կնգանը ախպորը ըսպանալ. կնգանը էն մին ախպերն էլ եկալ ա ներկարարին ախպորը ըսպանալ։

Ետնան էս կռեվ քցող կնեգյը քյինացալ ա տըեսալ սըտանան

հալա նոր ա օղում կռև քցի։ Ասալ ա. «Սրտանա, հինչ ը՞ս անում»։ Թա. «Հես ա նոր ըմ կռև քուցում»։ Թա. «Դե մին եկ քյինանք տես՝ քա՞նի մեյիդ կա վեր տառած, է՞»։ Սրտանան մնացալ ա սուս կացած։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին։